ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Դիտարկվող Համաձայնագրի նախագծի պատրաստման համար հաշվի է առնվել "Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Չեխիայի Հանրապետության պաշտպանության նախարարության միջև ռազմական համագործակցության մասին" 2010 թվականի մարտի 26-ին ստորագրված համաձայնագիրը: Մինչ չեխական կողմի պատրաստած դիտարկվող նախագիծը, հայկական կողմը ս.թ. մայիսին պատրաստել և ներգերատեսչական համաձայնեցման էր ենթարկել **"Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական բնագավառում համագործակցության մասին" համաձայնագրի մեկ այլ նախագիծ,** որի դրույթներում բանակցային գործընթացում նպատակային համարվեց որոշակի փոփոխություններ նախատեսել:

Դիտարկվող նախագծով նախատեսվում է ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում համագործակցություն, մասնավորապես՝ **ռազմական նշանակության արտադրանքի** մատակարարման, նորոգման, արդիականացման, շահագործման և տեխնիկական սպասարկման, **ռազմական նշանակության** թույլատրված **արտադրատեսակների** արտադրության կազմակերպման, **ռազմական նշանակության արտադրանքի** հետազոտման և մշակման, մատակարարման համար նախատեսված **ռազմական նշանակության արտադրանքի** որակի հսկողության ապահովման, մասնագետների և տեխնիկական անձնակազմի ուսումնական հաստատություններում պատրաստման, ինչպես նաև ռազմատեխնիկական համագործակցության փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղություններում: Համաձայնագիրը նախատեսում է Կողմերի համագործակցություն հայկական և չեխական ձեռնարկությունների, կազմակերպությունների և հաստատությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում առանձին պայմանագրերի կնքմամբ:

Ըստ նախագծի դրույթների, Համաձայնագրի իրագործումն ապահովելու համար Կողմերը պայմանավորվում են երկու կողմերի ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծել աշխատանքային խումբ, որի աշխատանքային նիստերի անցկացման կարգը, կազմը և հետագա մանրամասները կորոշվեն առանձին: Համաձայնագրի դրույթները նախատեսում են, որ Համաձայնագրի կիրառման ընթացքում առաջացած տարաձայնությունները կլուծվեն բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով:

Փաստաթղթի կնքումը երկու պետությունների կառավարությունների միջև կարևորվում է, քանի որ այն իրավական հիմք է ստեղծում արդյունավետ ռազմատեխնիկական համագործակցության համար:

Համաձայնագրի կնքումը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության ռազմավարական շահերին և դրա իրագործումը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության ազգային զինված ուժերի համար սպառազինության արդյունավետության ու հեռանկարային զարգացումների համար:

Հաշվի առնելով վերոնշյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար Ս.ՕՀԱՆՅԱՆ